ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՎՃԱՐՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի աշխատողների ընտանիքի անդամների՝ վճարովի աշխատանք կատարելու թույլտվություն տրամադրելու մասին» Համաձայնագրի կնքումը նպատակ ունի կանոնակարգել կողմերի պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անձնակազմի ընտանիքի անդամների վճարովի գործունեության իրականացումը մյուս կողմի պետության տարածքում:

Համաձայնագրի նպատակն է կողմերի միջև ստեղծել իրավական հիմք՝ դիվանագիտական, հյուպատոսական ծառայողներին ուղեկցող անձանց՝ (նրանց ընտանիքի անդամներին), մյուս կողմի պետության տարածքում անխոչընդոտ աշխատանքային գործունեություն ծավալելու համար: Համաձայնագրով սահմանվում են նստավայր պետությունում վճարովի աշխատանք կատարելու թույլտվություն ստանալու ընթացակարգերը, քաղաքացիական, վարչական և քրեական արտոնությունների ու անձեռնմխելիության կիրառելիությունը, ինչպես նաև նստավայր պետության օրենսդրությամբ պահանջվող այլ իրավունքներ և պարտականություններ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է գտնում վերոնշյալ Համաձայնագրի կնքումը:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ